Համաձայն Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 3-րդ հոդվածի և 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն, 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշումների, Աբովյան համայնքի ավագանու 2024 թվականի օգոստոսի 13-ի N 111-Ն, 2025 թվականի նոյեմբերի 20-ի N 177-Ն, N 178-Ն և 2026 թվականի սեպտեմբերի 09-ի N 151-Ա որոշումների, հաշվի առնելով «Արամուս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի դիմումը (մուտք՝ 2026 թվականի հունիսի 25-ի N S-1881) և համաձայնությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2026 թվականի օգոստոսի 12-ի N 12082026-07-0064 վկայական) Արամուս գյուղի Տիգրանաձորի խճուղի թիվ 114/4 հասցեում գտնվող պահեստները՝ 58.6 քառակուսի մետր արտաքին և 43.7 քառակուսի մետր ներքին մակերեսներով, հարթակը՝ 72.7 քառակուսի մետր մակերեսով և դրանց պահպանման ու սպասարկման համար առանձնացված 760.1 քառակուսի մետր մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցներն իրականացրած «Արամուս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:
2. Ընդունել ի գիտություն, որ՝
1) շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.
2) շինությունները, համաձայն համայնքի տարածակական պլանավորման փաստաթղթերի, կառուցված չեն Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.
3) շինությունները կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
3. Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով.

1) շինությունների 1 քառակուսի մետրի համար՝ 3 346 (երեք հազար երեք հարյուր քառասունվեց) դրամ (տարածագնահատման 12-րդ գոտի, կիրառված գործակիցը՝ 0.1673).
2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 2 887.5 (երկու հազար ութ հարյուր ութսունյոթ ամբողջ հինգ) դրամ, իսկ սահմանված չափից ավելի հողատարածքի 1 քառակուսի մետրի արժեքը կազմում է 8 662.5 (ութ հազար վեց հարյուր վաթսուներկու ամբողջ հինգ):
4. «Արամուս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը պարտավոր է վճարել.
1) համայնքապետարանի 900105201777 հաշվեհամարին՝ 439 330 (չորս հարյուր երեսունինը հազար երեք հարյուր երեսուն) դրամ՝ շինությունների գինը.
2) համայնքապետարանի 900105201363 հաշվեհամարին՝ 4 309 600 (չորս միլիոն երեք հարյուր ինը հազար վեց հարյուր) դրամ՝ հողամասի գինը.
3) համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին ծառայության վճարներ՝ 65 000 (վաթսունհինգ հազար) դրամ՝ համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքի օտարման փաստաթղթերի կազմման համար, 10 000 (տասը հազար) դրամ՝ հասցեի տրամադրման համար:
5. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է «Արամուս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից:
6. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարների՝ 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը կհամարվի ուժը կորցրած:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Արամուս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Է. ԲԱԲԱՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 12
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 հոկտեմբերի 2026 թվականի N 4905

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՂԱՇԵՆ ԳՅՈՒՂԻ 2-ՐԴ ԹԱՂԱՄԱՍԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑԻ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔԻ ԹԻՎ 9 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ՊԱՐԻՍՊՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2021 թվականի դեկտեմբերի 16-ի N ՀՕ-397-Ն օրենքի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ և 13-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշման, հաշվի առնելով այն հանգամանքը, որ բնակելի տունը և պարիսպը կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով Սոֆյա Հովհաննիսյանի դիմումը (մուտք՝ 2026 թվականի սեպտեմբերի 22-ի N Ք-7347).


ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Սոֆյա Անդրանիկի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2026 թվականի մայիսի 07-ի N 07052026-07-0161 վկայական) Աբովյան համայնքի Գեղաշեն գյուղի 2-րդ թաղամասի 1-ին փողոցի 1-ին նրբանցքի թիվ 9 հասցեում գտնվող 1 919.8 քառակուսի մետր փաստացի մակերեսով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված 78.5 քառակուսի մետր արտաքին 59.75 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի տունը և 12.05 քառակուսի մետր մակերեսով պարիսպը համարել օրինական (Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 20267ZX7MF):
2. Սոֆյա Հովհաննիսյանը պարտավոր է ինքնակամ կառուցված բնակելի տան և պարսպի օրինականացման համար սույն որոշման ընդունման օրվանից 60 (վաթսուն) օրվա ընթացքում Աբովյանի համայնքապետարանի 900105201397 հաշվեհամարին վճարել 109 480 (հարյուր ինը հազար չորս հարյուր ութսուն) դրամ, հակառակ դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած.
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սոֆյա Հովհաննիսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 12
ք. Աբովյան

Լիազորված չափագրական կազմակերպություն	ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ	Ձև 1
Սոֆյա Անդրանիկի Հովհաննիսյան	Կոտայքի մարզ Աբովյան համայնք, գ. Գեղաշեն 2-րդ թաղամաս 1-ին փողոց, 1-ին նրբ., 9	Հաստատում եմ 02.10.2026թ.
	մարզ, համայնք, հասցե	Համայնքի ղեկավար Կ.Տ.
	Սեփականության վկայական N 07052026-07-0161	
	հողահատկացման հիմքը	անուն, ազգանուն, հայրանուն



Մակերես հա	0.19198
Ծածկագիր	07-023-0084-0019
Նպատակային նշանակություն	բնակավայրերի
Գործառական նշանակություն	բև կառ.

Լրացուցիչ նշումներ.

ՀՈՂԱՄԱՍԻ

Շրջադարձային բնեմաց կետեր	Կոորդինատներ Y	Կոորդինատներ X	Գծային չափերը (մ)
1	8475906.6847	4454370.7738	
2	8475863.6864	4454416.2674	62.60
3	8475884.1887	4454438.9209	30.55
4	8475927.5020	4454393.5713	62.71
5	8475910.7196	4454374.7499	25.22
6	8475909.4868	4454375.4826	1.43
1	8475906.6847	4454370.7738	5.48

Մասշտաբ 1:1000

Որակավորում ունեցող անձ	Մանվել Ղուկասյան
Որակավորման վկայականի համարը	046
Ստորագրություն	
Իրավաբանական անձի անվանումը	«ԳԻՍ-ԱՐՏ» ՍՊԸ
ՀՎՀՀ	03532649
Ստորագրություն	

ամիս ամսաթիվ	չափագրության	04.09.2026
	հատակագծի կազմման	09.09.2026

Կ.Տ

1.ինք. բնակելի տուն			
Շրջադարձային կետերի համարները	Կոորդինատներ		Կողմերի երկարություններ (մ)
	Y	X	
1	8475887.1266	4454417.8208	
2	8475877.6681	4454425.8532	12.41
3	8475881.8502	4454430.6501	6.36
4	8475891.2230	4454422.6428	12.33
1	8475887.1266	4454417.8208	6.33

Որակավորում ունեցող անձ		Մանվել Ղուկասյան
Որակավորման վկայականի համարը		046
Ստորագրություն		
Իրավաբանական անձի անվանումը		«ԳԻՍ-ԱՐՏ» ՍՊԸ
ՀՎՀՀ		03532649
Ստորագրություն		
ամիս ամսաթիվ	չափագրության	04.09.2022
	հատակագծի կազմման	09.09.2022


Կ. Տ

ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Կոտայքի մարզ Աբովյան համայնք, գ. Գեղաշեն 2-րդ թաղամաս 1-ին փողոց, 1-ին նրբ., 9

մարզ, համայնք, հասցե

Սեփականատեր	Սոֆյա Անդրանիկի Հովհաննիսյան



1.նկուղ
H=0.00-0.40
D=0.50

Sարտ.=78.5քմ

Լրացուցիչ նշումներ.

Մասշտաբ 1:200

Որակավորում ունեցող անձ	Մանվել Դուկասյան
Որակավորման վկայականի համարը	046
Ստորագրություն	
Իրավաբանական անձի անվանումը	«ԳԻՆ-ԱՐՏ» ՍՊԸ
ՀՎՀՀ	03532649
Ստորագրություն	

ամիս ամսաթիվ	չափագրության	04.09.2026
	հատակագծի կազմման	09.09.2026

Կ. Տ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 հոկտեմբերի 2026 թվականի N 4904

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ 6-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 21 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԾԱԾԿԱՐԱՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2021 թվականի դեկտեմբերի 16-ի N ՀՕ-397-Ն օրենքի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ և 13-րդ կետերի, 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշման, հաշվի առնելով այն հանգամանքը, որ բնակելի տունը և ծածկարանները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով Յուրի Պողոսյանի դիմումը (մուտք՝ 2026 թվականի սեպտեմբերի 24-ի N Ք-7431).

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Նուբար Նիկոլայի Առուստամյանին և Յուրի Գագիկի Պողոսյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2016 թվականի օգոստոսի 31-ի N 26052026-07-0162 վկայական) Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի 6-րդ փողոցի թիվ 21 հասցեում գտնվող 430.0 քառակուսի մետր մակերեսով բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված 89.04 քառակուսի մետր արտաքին, 70.04 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի տունը և 53.11 քառակուսի մետր մակերեսով ծածկարանները համարել օրինական (Կադաստրի կոմիտեի 2026 թվականի սեպտեմբերի 07-ի N ԳՄ/18791-2026 գրություն):
2. Սույն որոշման 1-ին կետում նշված անձինք պարտավոր են ինքնակամ կառուցված բնակելի տան և ծածկարանների օրինականացման համար սույն որոշման ընդունման օրվանից 60 (վաթսուն) օրվա ընթացքում Աբովյանի համայնքապետարանի 900105201397 հաշվեհամարին վճարել 387 360 (երեք հարյուր ութսունյոթ հազար երեք հարյուր վաթսուն) դրամ, հակառակ դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 12
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 հոկտեմբերի 2026 թվականի N 4903

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՏԻՍԻ ՓՈՂՈՑԻ 114/1 ՀԱՍՑԵԻՆ ԿԻՑ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՊԱՀԱԿԱԿԵՏԸ ԵՎ ՊԱՐԻՍՊԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽՎԱԾ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2021 թվականի դեկտեմբերի 16-ի N ՀՕ-397-Ն օրենքի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ և 55-րդ կետերի, 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն, N 912-Ն և Աբովյան համայնքի ավագանու 2024 թվականի օգոստոսի 13-ի N 111-Ն որոշումների, հաշվի առնելով Մեջլում Հայրապետյանի լիազորած անձ Ելենա Մանուչարյանի դիմումը (մուտք՝ 2026 թվականի օգոստոսի 24-ի N Ք-6512).

1. Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի Հատիսի փողոցի 114/1 հացեին կից գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման 109.3 քառակուսի մետր մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 57.34 քառակուսի մետր արտաքին և 40.88 քառակուսի մետր ներքին մակերեսով պահակակետը, 21.23 քառակուսի մետր մակերեսով պարիսպը համարել Աբովյան համայնքի սեփականություն և ճանաչել օրինական (Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 2023ZE77DB):

2. Ընդունել ի գիտություն, որ՝

1) շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2) շինությունները, համաձայն համայնքի տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծի, կառուցված չեն Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

3) շինությունները կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3.Հաստատել սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված շինությունների և դրանց պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասի հատակագիծը (կցվում է):

4.Սույն որոշման 1-ին կետում նշված շինությունների պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասի գործառնական նշանակությունը համարել փոփոխված որպես հասարակական կառուցապատման հողամաս և անշարժ գույքին տրամադրել հասցե՝ համայնք Աբովյան, քաղաք Աբովյան, Ուսանողական թաղամաս, թիվ 4/6:

5. Սույն որոշումն՝ ընդունման օրվանից 5-օրյա ժամկետում, տրամադրել անշարժ գույքի կադաստրի համապատասխան ստորաբաժանմանը:

6. Սույն որոշումից ծագող իրավունքի պետական գրանցման օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկություն անել ինքնակամ կառույցներն իրականացրած Մեջլում Հայրապետյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված կառույցները և համապատասխան հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) տրամադրելու մասին:


7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 12
ք. Աբովյան

ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Սեփականատեր	Կոտայք Աբովյան Մարզ, համայնք, հասցե	Հաստատում եմ 12.10.2023թ. Համայնքի ղեկավար Կ.Տ. անուն, ազգանուն, հայրանուն
Աբովյան համայնք		
	Հողահատկացման հիմքը	



Մակերես հա	0.01093
Ծածկագիր	07-002-0063-0023-հg
Նպատակային նշանակություն	Բնակավայրերի
Գործառնական նշանակություն	Հասարակական կառուցապատում

Լրացուցիչ նշումներ.

Հողամասի

Շրջադարձային (բեկման) կետեր	Կոորդինատներ		Գծային չափերը (մ)

Մասշտաբ 1:1000

Որակավորում ունեցող անձ		Էդիկ Վիրաբյան
Որակավորման վկայականի համարը		220
Ստորագրություն		
Իրավաբանական անձի անվանումը		<<ԳԵՈԼԵՆԴ>>ՍՊԸ
ՀՎՀՀ		3023406
Ստորագրություն		
ամիս ամսաթիվ	չափագրության	18.09.2023թ.
	հատակագծի կազմման	28.09.2023թ.

Կ.Տ.

Հողամասի			
Հաշվառման կետերի (քննման կետեր) համարները	Y	X	Կետերի միջև հեռավորությունը
1	8469466.085	4460483.93	0.69
2	8469465.448	4460484.203	67.92
3	8469494.96	4460545.378	11.44
4	8469484.652	4460550.351	1.54
5	8469485.25	4460551.771	13.65
6	8469472.698	4460557.137	0.9
7	8469473.08	4460557.951	0.25
8	8469473.306	4460557.839	16.15
9	8469488.086	4460551.334	0.38
10	8469488.398	4460551.117	1.33
11	8469489.16	4460552.21	10.31
12	8469497.669	4460546.386	5.28
13	8469494.767	4460541.971	1.84
14	8469493.974	4460540.313	2.4
15	8469492.76	4460538.237	2.66
16	8469491.548	4460535.864	12.43
17	8469485.891	4460524.793	3.38
18	8469484.563	4460521.681	5.51
19	8469482.141	4460516.734	6.44
20	8469479.308	4460510.947	30.08
1	8469466.085	4460483.93	

1. Պահակակետ			
Սահմանագծի կետերի համարները	Y	X	Կետերի միջև հեռավորությունը
1	8469494.767	4460541.971	1.32
2	8469493.681	4460542.728	2.94
3	8469494.96	4460545.378	8.09
4	8469487.677	4460548.892	0.69
5	8469487.055	4460549.192	3.68
6	8469489.16	4460552.21	10.31
7	8469497.669	4460546.386	5.28
1	8469494.767	4460541.971	

Որակավորում ունեցող անձ			Եղիկ Վրաբյան
Որակավորման վկայականի համարը			220
Ստորագրություն			
Իրավաբանական անձի անվանումը			<<ԳԵՈԼԵՆԴ>>ՍՊԸ
ՀՎՀՀ			3023406
Ստորագրություն			
ամիս ամսաթիվ	չափագրության	18.09.2023թ.	
	հատակագծի կազմման	28.09.2023թ.	

ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԾՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ «ԳԵՈԼԵՆԴ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ «GEOLAND» LIMITED LIABILITY COMPANY 03023406

ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Կոտայք Աբովյան


Մարզ, համայնք, հասցե

Սեփականատեր	Աբովյան համայնք

1. Պահակակետ

1-ին հարկ


H=2.4
h=2.2
D=0.4
d=0.4



Sպրտ.=34.56ՔՄ

2-րդ հարկ

H=2.4
h=2.2
D=0.4
d=0.4



Sպրտ.=22.78ՔՄ

Լրացուցիչ նշումներ.

Մասշտաբ 1:100

Որակավորում ունեցող անձ	Էդիկ Պիրոյան
Որակավորման վկայականի համարը	ՎԵՈ220
Ստորագրություն	
Իրավաբանական անձի անվանումը	"ГЕОЛЕНД"
ՀՎՀՀ	03023406
Ստորագրություն	

ամիս ամսաթիվ		
	չափագրության	18.09.2023թ.
	հատակագծի կազմման	28.09.2023թ.

Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 հոկտեմբերի 2026 թվականի N 4902

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱԼԱՀՈՎԻՏ ԳՅՈՒՂԻ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆՆԵՐԻ 6-ՐԴ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽՎԱԾ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2021 թվականի դեկտեմբերի 16-ի N ՀՕ-397-Ն օրենքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ և 55-րդ կետերի, 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն, N 912-Ն որոշումների, հաշվի առնելով Լուսիկ Գրիգորյանի դիմումը (մուտք՝ 2026 թվականի սեպտեմբերի 08-ի N Ք-6996).

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Աբովյան համայնքի Բալահովիտ գյուղի Կարմիր բանակայինների 6-րդ փողոցի հարևանությամբ գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող 226.9 քառակուսի մետր մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված բնակելի նշանակության 107.1 քառակուսի մետր արտաքին և 86.2 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի տունը համարել Աբովյան համայնքի սեփականություն և ճանաչել օրինական (Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 20238AZDZ7):
2. Ընդունել ի գիտություն, որ՝
1) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.
2) շինությունը, համաձայն համայնքի տարածական պլանավորման փաստաթղթերի, կառուցված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.
3) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
3. Հաստատել սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված շինության և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասի հատակագիծը (կցվում է):
4. Սույն որոշման 1-ին կետում նշված շինության և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասի գործառնական նշանակությունը համարել փոփոխված

որպես բնակելի կառուցապատման հողամաս և տրամադրել հասցե՝ համայնք Աբովյան, գյուղ Բալահովիտ, Կարմիր բանակայինների 6-րդ փողոց, 1-ին նրբանցք, 4/1:

6. Սույն որոշումից ծագող իրավունքի պետական գրանցման օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկություն անել ինքնակամ կառույցներն իրականացրած Լուսիկ Գրիգորյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված կառույցը և համապատասխան հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) տրամադրելու մասին:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Է. ԲԱԲԱՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 12

ք. Աբովյան


ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻՇ

Սեփականատեր	Կոտայքի մարզ, համայնք Աբովյան գ. Բալահովիտ
Համայնք Աբովյան	Մարզ, համայնք, հասցե
	Հողհատկացման հիմքը

Հաստատում եմ 12.10.2023 թ.

Համայնքի ղեկավար Կ.Տ.

անուն, ազգանուն, հայրանուն



Մակերես հա	0.02269
Ծածկագիր	07-018-0101-0059
Նպատակային նշանակություն	Բնակավայրերի
Գործառնական նշանակություն	այլ

Հողամասի			
Շրջադարձային (բեկման) կետեր	Կոորդինատները		Գծային չափերը (մ)
	X	Y	
1	4459467.0600	8466696.7900	3.24
2	4459469.9400	8466695.3100	11.59
3	4459481.5300	8466695.0100	18.11
4	4459481.7900	8466713.1200	6.41
5	4459475.3900	8466712.7300	5.54
6	4459469.9857	8466711.5293	15.03
1	4459467.0600	8466696.7900	

Մասշտաբ 1:200

Որակավորում ունեցող անձ		Շավեն Իգիթխանյան
Որակավորման վկայականի համարը		N 0374
Ստորագրություն		
Իրավաբանական անձի անվանումը		<<ԳԵՈԳԼՈԲԱԼ>> ՍՊԸ
ՀՎՀՀ		00491374
Ստորագրություն		
ամիս ամսաթիվ	չափագրության	15.12.23թ
	հատակագծի կազմման	26.12.23թ

Կ.Տ.

1.Բնակելի տուն			
Շրջադարձային (բեկման) կետեր	Կոորդինատները		Գծային չափերը (մ)
	X	Y	
1	4459468.1722	8466698.7522	7.95
2	4459475.9591	8466697.1503	13.25
3	4459478.6290	8466710.1285	7.95
4	4459470.8421	8466711.7304	13.25
1	4459468.1722	8466698.7522	


Որակավորում ունեցող անձ			Շավեն Իգիթխանյան
Որակավորման վկայականի համարը			N 0374
Ստորագրություն			
Իրավաբանական անձի անվանումը			<<ԳԵՈԳԼՈԲԱԼ>> ՍՊԸ
ՀՎՀՀ			00491374
Ստորագրություն			
ամիս ամսաթիվ	չափագրության	15.12.23թ	Կ.Տ.
	հատակագծի կազմման	26.12.23թ	

ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Կոտայքի մարզ, համայնք Աբովյան գ. Բալահովիտ

Մարզ, համայնք, հասցե

Սեփականատեր	Համայնք Աբովյան



1.Բնակելի տուն

h = 3.00
H = 3.20
D = 0.40
d = 0.15-0.50

Լրացուցիչ նշումներ.

Մասշտաբ 1:100

Որակավորում ունեցող անձ	Չավեն Իգիթխանյան
Որակավորման վկայականի համարը	N 0374
Ստորագրություն	
Իրավաբանական անձի անվանումը	<<ԳԵՈԳԼՈԲԱԼ>> ՍՊԸ
ՀՎՀՀ	00491374
Ստորագրություն	

ամիս ամսաթիվ	չափագրության	15.12.23թ
	հատակագծի կազմման	26.12.23թ

Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 հոկտեմբերի 2026 թվականի N 4901

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 27-Ի N 4226 ՈՐՈՇՄԱՄԲ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ N ԱՇԹԴ/751/10195-26 ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏԻ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ) ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, հիմք ընդունելով Էմմա Թարխանյանի դիմումը (մուտք՝ 2026 թվականի օգոստոսի 25-ի N Ք-6528).

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Աբովյան համայնքի ղեկավարի 2026 թվականի օգոստոսի 27-ի «Էմմա Թարխանյանի կողմից իրականացված բնակելի տան վերակառուցման շահագործման թույլտվությունը ձևակերպելու մասին» N 4226 որոշմամբ տրամադրված N ԱՇԹԴ/751/10195-26 ավարտական ակտի (շահագործման թույլտվություն) մեջ երկրորդ տողում կատարել հետևյալ փոփոխությունը՝ «կառուցում» բառը փոխարինել «վերակառուցում» բառով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Է. ԲԱԲԱՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 12
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 հոկտեմբերի 2026 թվականի N 4900

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ԷԼԱՐԻ ՓՈՂՈՑԻ 24 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի 11-րդ կետի, 24-րդ կետի 3-րդ, 4-րդ և 10-րդ ենթակետերի, հաշվի առնելով Կոտայքի մարզպետի 2026 թվականի սեպտեմբերի 22-ի N 01.2/03.1/08229-2026 գրությամբ (մուտք՝ 2026 թվականի սեպտեմբերի 23-ի N Պ-3292) տրամադրված լիազոր մարմնի համաձայնությունը և հիմք ընդունելով «ԷԼԻՏ ՓՐՈՋԵՔԹ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի դիմումը (մուտք՝ 2026 թվականի հունիսի 12-ի N S-1733).

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. «ԷԼԻՏ ՓՐՈՋԵՔԹ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատկանող (հիմք՝ 2024 թվականի հունիսի 05-ի N 05062024-07-0146 վկայական) Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի Էլարի փողոցի 24 հասցեում գտնվող 07-002-0099-0233 կադաստրային ծածկագրով 0.26361 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասի կառուցապատման չափորոշիչները փոփոխել 6-9 վերգետնյա հարկով միջին հարկայնության բնակելի կառուցապատման գոտու կառուցապատման չափորոշիչների՝ ԲՆԿԳ-3:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 12
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 հոկտեմբերի 2026 թվականի N 4899

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 25-Ի N 579 ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ N ՇԹ/764/3506-25 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, Աբովյան համայնքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 20-ի N 176-Ն որոշման, հիմք ընդունելով «ԷՍԿԱՐՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2026 թվականի սեպտեմբերի 23-ին լրամշակված և փոփոխված աշխատանքային նախագիծը, հաշվի առնելով Արման Սիմոնյանի լիազորած անձ Ռաֆայել Արզումանյանի դիմումը (մուտք՝ 2026 թվականի սեպտեմբերի 30-ի N Ք-7608).

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Տալ համաձայնություն Աբովյան համայնքի ղեկավարի 2025 թվականի փետրվարի 25-ի N 579 որոշմամբ հաստատված N ՇԹ/764/3506-25 շինարարության թույլտվությամբ սահմանված նախագծային փաստաթղթերում կատարված փոփոխությանը և Արման Սիմոնյանին տալ շինարարության թույլտվություն:
2. Արման Սիմոնյանը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105201454 հաշվեհամարին մուծել 90 000 (իննսուն հազար) դրամ տեղական տուրք՝ շինարարության թույլտվության համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 12
ք. Աբովյան

Փաստաթղթի
վավերականության ստուգումն
ու էլեկտրոնային բնօրինակի
պատճենումը հնարավոր է
իրականացնել https://verify.e-
gov.am կայքում հետևյալ հանձ
նարարով՝ PMDF-A14A-CE83-
3482:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

N ՇԹ/764/38979-26 13-10-2026

Տրված է կառուցապատող **ԱՐՄԱՆ ՍԻՄՈՆՅԱՆ / 1914960467 / ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ, ՎԱՐԴԵՆԻՍ, ԲԱՂՐԱՄՅԱՆ Փ., 2S**, հողամասի գտնվելու վայրը՝ **Մարզ Կոտայք, համայնք Աբովյան գյուղ Վերին Պտղնի Նորավան թաղամասի 2-րդ փողոց 39 հողամաս**

(իրավաբանական անձի անվանումը, պետական գրանցման վկայականի համարը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հասցեն, հողամասի գտնվելու վայրը)

Օբյեկտի անվանումը՝ **Կառուցում, Բնակելի տուն, ամառային խոհանոց և քարե պարսպ, երկհարկանի բնակելի տուն 11.4x12.4 մ, ամառային խոհանոցը 5.385x7.66 մ և քարե պարիսպ 0.2x52.61 մ: Կառուցապատման մակերեսը կազմում է 206.332 ք.մ., Ռիսկայնության աստիճանը՝ II**

(օբյեկտի անվանումը, ռիսկայնության աստիճանը (կատեգորիան), հասկիրճ բնութագիրը, հիմնական ցուցանիշները)

1. Օբյեկտի նախագծային փաստաթղթերը՝

1) մշակվել են **««Նախագիծ»»**,

ճարտարապետական մաս՝ «ԷՍԿԱՐՊ» ՍՊԸ (ԿԱՐԵՆ ՀՈՎԵՑԱՆ, ՃԲԴ-Ա-0122, ՆԱԽԱԳԻԾ՝ N 1234005)

կոնստրուկտորական մաս՝ «ԷՍԿԱՐՊ» ՍՊԸ (ԳԱՅԱՆԵ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, ԿԵԴ-Ա2-016, ՆԱԽԱԳԻԾ՝ N 1234005) կողմից

(նախագծային փաստաթղթերը փուլը, նախագծային աշխատանքների կատարողների անվանումը, լիցենզիայի համարը)

2) ստացել է (են) փորձագիտական դրական եզրակացությունը (եզրակացությունները)

(նշել փորձաքննության տեսակը)

կամ

նախագիծը թողարկող պատասխանատու կապալառուի երաշխավորագիրը՝ N18 «ԷՍԿԱՐՊ» ընկերության կողմից

(նշել նախագիծը թողարկող պատասխանատու կապալառուի երաշխավորության պայմանագրի համարը)

3) սահմանված կարգով համաձայնեցվել են իրավասու մարմնի, օրենքով սահմանված այլ շահագրգիռ մարմինների հետ՝

Նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք)՝ 21.10.2024թ ՆԹ-1134-24

Աբովյան համայնքի ղեկավարի հետ համաձայնեցված 25.02.2025թ. N 104618 ի հետ 2025-02-25 համաձայնեցված հ. 104618 նախագծերը

(նշել մասնագետի անվանումները և համաձայնեցման ժամկետները)

2. Շինարարական աշխատանքներն իրականացնել **մինչև 25.02.2027թ.** ընթացքում

(նշել շինարարության նորմատիվային տևողությունը)

Ներառյալ ավարտական ակտի տրամադրման համար ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքի համար նախատեսվող ժամկետը:

2.1. Ապահովել օբյեկտի շահագործման թույլտվության ստացումը՝

☐ ավարտական ակտի տրամադրումից 5

☑ ավարտական ակտի տրամադրման օրը:

Ներառյալ ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքի համար նախատեսվող ժամկետը:

3. Շինարարության վարման մատյանը բաղկացած է էջից, կարված և դրոշմակնքված է կողմից:

(իրավասու մարմնի անվանումը)

4. Նախագծային փաստաթղթերը փոփոխվել են (լրացվում է N 1 հավելվածի 108-րդ կետով նախատեսված դեպքերում) **«ԷՍԿԱՐՊ» ՍՊԸ (ԳԱՅԱՆԵ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, ԿԵԴ-Ա2-016, ՆԱԽԱԳԻԾ՝ N 1234005), «ԷՍԿԱՐՊ» ՍՊԸ**

(ԿԱՐԵՆ ՀՈՎԵՅԱՆ, ՃԲԴ-Ա-0122, ՆԱԽԱԳԻԾ՝ N 1234005) ընկերության(ընկերությունների) կողմից

(նախագծային աշխատանքների կապալառուի անվանումը, լիցենզիայի համարը)

և սահմանված կարգով համաձայնեցվել իրավասու մարմնի և այլ շահագրգիռ մարմինների հետ:

(նշել օրենքով սահմանված համաձայնեցնող մարմինների անվանումները)

5. Հատուկ պայմաններ՝

1) կառուցապատողը, նախքան շինարարությունն սկսելը, ինչպես նաև դրա ընթացքում, պարտավոր է հասցվելիք վնասների փոխհատուցման համար համաձայնության գալ կառուցապատման հետևանքով վնասներ կրող սուբյեկտների հետ.

2) շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետներում կառուցապատումը չավարտելու դեպքում գործում են N 1 հավելվածի 123-126-րդ կետերով սահմանված պահանջները.

3) (լրացվում է N 1 հավելվածի 84-րդ կետով սահմանված դեպքերում) սույն թույլտվությունը տրվել է սահմանված կարգով հաստատված «Նախագիծ» փուլի հիման վրա, որին հաջորդող «Աշխատանքային փաստաթղթեր» փուլը պետք է ապահովի հաստատված փուլով ընդունված լուծումները և աշխատանքների իրականացման հաջորդականությունը

(նշվում են նախապատրաստական, հողային, շինմոնտաժային աշխատանքները և այլ աշխատանքներ)

6. (լրացվում է N 1 հավելվածի 116-րդ կետով սահմանված դեպքերում) Հաշվի առնելով, որ կառուցվող օբյեկտի շինարարությունը հնարավոր չէ առանց գլխավոր հատակագծի վրա _____ հասարների տակ նշված շենքի (շենքերի) և կամ շինության (շինությունների) քանդման՝

(նշվում են ամբողջությամբ կամ մասամբ քանդման ենթակա օբյեկտները, դրանց հիմնական ցուցանիշները, ընդհանուր մակերեսը, հարկայնությունը, շինանյութերը և այլն)

սեփականատիրոջը (օգտագործողին, պետական գրանցման վկայական՝ _____) տրված սույն թույլտվությունը նաև քանդման թույլտվություն է: Օբյեկտի քանդման աշխատանքներն իրականացնել նախագծային փաստաթղթերով ամրագրված հաջորդականությամբ:

7. Այլ պայմաններ **սույն թույլտվությունը տրված է ի լրումն Աբովյան համայնքի ղեկավարի կողմից տրված 25.02.2025թ. N ՇԹ/764/3506-25 շինարարության թույլտվության, փոփոխվել է Աբովյան համայնքի ղեկավարի 12.10.2026թ. N 4899 որոշմամբ**:

(նշվում են հրաժեշտության ելքերով և (կամ) պայմանագրով նախատեսված այլ պայմանները)

8. Կառուցապատողը շինարարական (քանդման, ապամոնտաժման) աշխատանքներն սկսելուց առնվազն 3 օր առաջ, համաձայն N 5 հավելվածի N 2-5 ձևի, տեղեկացնում է իրավասու մարմնին:

9. Թույլտվության հիման վրա ցանկացած շինարարական և զուգահեռ աշխատանք կարող է իրականացվել բացառապես Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, նախագծային փաստաթղթերին և նորմատիվ-տեխնիկական պահանջներին համապատասխան:

(Սույն շինարարության թույլտվությունը տրվում է ի լրումն և ի փոփոխություն 25-02-2025թ., ՇԹ/764/3506-25 շինարարության թույլտվության)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Աբովյան համայնքի ղեկավար՝ **ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ**

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Կ. Տ.
(ձևը փոփ. 16.06.16 N 630-Ն)

13.10.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 հոկտեմբերի 2026 թվականի N 4898

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 2899 ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ N 351 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, Աբովյան համայնքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 20-ի N 176-Ն որոշման, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 2025 թվականի մարտի 18-ի N 18032025-07-0103 վկայականը, «ԱՆՏՈՆՅԱՆ ՆԱԽԱԳԻԾ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2026 թվականի օգոստոսի 17-ին լրամշակված և փոփոխված աշխատանքային նախագիծը, հաշվի առնելով Խաչատուր Շաքարյանի դիմումը (մուտք՝ 2026 թվականի հոկտեմբերի 02-ի N Ք-7710).

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Տալ համաձայնություն Աբովյան համայնքի ղեկավարի 2022 թվականի սեպտեմբերի 16-ի N 2899 որոշմամբ հաստատված N 351 շինարարության թույլտվությամբ սահմանված նախագծային փաստաթղթերում կատարված փոփոխությանը և Խաչատուր Շաքարյանին ու Դինարա Օսիպյանին տալ շինարարության թույլտվություն:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված անձինք պարտավոր են Աբովյանի համայնքապետարանի 900105201454 հաշվեհամարին մուծել 90 000 (իննսուն հազար) դրամ տեղական տուրք՝ շինարարության թույլտվության համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 12
ք. Աբովյան

Փաստաթղթի էլեկտրոնային տարբերակի ստուգումն ու իրականացնելու համար անհրաժեշտ է https://verify.e-gov.am կայքում հետևյալ հղիչ համարով PMFA-8951-5438-4C91:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

N ՇԹ/752/38998-26 13-10-2026

Տրված է կառուցապատող **ԽԱՉԱՏՈՒՐ ՇԱՔԱՐՅԱՆ / 1209810077 / ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ, Կ. ՈՒԼՆԵՑՈՒ 3 ՓԿՂ., 2Շ, 25ԲՆ/ԴԻՆԱՐԱ ՕՍԻՊՅԱՆ / 6403850296 / ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ, Կ. ՈՒԼՆԵՑՈՒ 3 ՓԿՂ., 2Շ, 25ԲՆ**, հողամասի գտնվելու վայրը՝ **Մարզ Կոտայք, համայնք Աբովյան գյուղ Առինջ Պ. Դուրյան թաղամասի 12-րդ փողոց 6 հողամաս**

(իրավաբանական անձի անվանումը, պետական գրանցման վկայականի համարը, Ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հասցեն, հողամասի գտնվելու վայրը)

Օբյեկտի անվանումը՝ **Կառուցում, Բնակելի տուն և պարիսպ, Բնակելի տուն և պարիսպ, Ռիսկայնության աստիճանը՝ III**

(օբյեկտի անվանումը, ռիսկայնության աստիճանը (կատեգորիան), հակիրճ բնութագիրը, հիմնական ցուցանիշները)

1. Օբյեկտի նախագծային փաստաթղթերը՝

1) մշակվել են **«Աշխատանքային նախագիծ»**,

Ճարտարապետական մաս՝ «ԱՆՏՈՆՅԱՆ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ(ՏԻԳՐԱՆ ԱՍԿԻՋՅԱՆ)

Կոնստրուկտորական մաս՝ «ԱՆՏՈՆՅԱՆ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ(ԱՐԿԱԴՅԱ ԱՆՏՈՆՅԱՆ) կողմից

(նախագծային փաստաթղթերի փուլը, նախագծային աշխատանքների կապալառուի անվանումը, լիցենզիայի համարը)

2) ստացել է (են)

«ՀԱԲՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» (լիցենզիա ՔՊԼ-000802) 17.08.2026թ. N 432/26

«ՀԱԲՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» (լիցենզիա ՔՊԼ-000802) 17.08.2026թ. N 432/26 փորձագիտական դրական եզրակացությունը (եզրակացությունները)

(նշել փորձաքննության տեսակը)

կամ

նախագիծը թողարկող պատասխանատու կապալառուի երաշխավորագիրը՝

(նշել նախագիծը թողարկող պատասխանատու կապալառուի երաշխավորության պայմանագրի համարը)

3) սահմանված կարգով համաձայնեցվել են իրավասու մարմնի, օրենքով սահմանված այլ շահագրգիռ մարմինների հետ՝

Նախագծման թույլտվություն (Ճարտարապետահատակագծային առաջադրանք)՝ 22.06.2022թ 274

(նշել մարմինների անվանումները և համաձայնեցման ժամկետները)

2. Շինարարական աշխատանքներն իրականացնել **մինչև 27.09.2027թ.** ընթացքում

(նշել շինարարության նորմատիվային տևողությունը)

Ներառյալ ավարտական ակտի տրամադրման համար ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքի համար նախատեսվող ժամկետը:

2.1. Ապահովել օբյեկտի շահագործման թույլտվության ստացումը՝

☐ ավարտական ակտի տրամադրումից

☑ ավարտական ակտի տրամադրման օրը:

Ներառյալ ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքի համար նախատեսվող ժամկետը:

3. Շինարարության վարման մատյանը բաղկացած է էջից, կարված և դրոշմակնքված է կողմից:

(իրավասու մարմնի անվանումը)

4. Նախագծային փաստաթղթերը փոփոխվել են (լրացվում է N 1 հավելվածի 108-րդ կետով նախատեսված դեպքերում) **«ԱՆՏՈՆՅԱՆ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ** ընկերության(ընկերությունների) կողմից

(նախագծային աշխատանքների կապալառուի անվանումը, լիցենզիայի համարը)

և սահմանված կարգով համաձայնեցվել իրավասու մարմնի և այլ շահագրգիռ մարմինների հետ:

(նշել օրենքով սահմանված համաձայնեցնող մարմինների անվանումները)

5. Հատուկ պայմաններ՝

1) կառուցապատողը, նախքան շինարարությունն սկսելը, ինչպես նաև դրա ընթացքում, պարտավոր է հասցվելիք վնասների փոխհատուցման համար համաձայնության գալ կառուցապատման հետևանքով վնասներ կրող սուբյեկտների հետ.

2) շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետներում կառուցապատումը չավարտելու դեպքում գործում են N 1 հավելվածի 123-126-րդ կետերով սահմանված պահանջները.

3) (լրացվում է N 1 հավելվածի 84-րդ կետով սահմանված դեպքերում) սույն թույլտվությունը տրվել է սահմանված կարգով հաստատված «Նախագիծ» փուլի հիման վրա, որին հաջորդող «Աշխատանքային փաստաթղթեր» փուլը պետք է ապահովի հաստատված փուլով ընդունված լուծումները և աշխատանքների իրականացման հաջորդականությունը

(նշվում են նախապատրաստական, հողային, շինմոնտաժային աշխատանքները և այլ աշխատանքներ)

6. (լրացվում է N 1 հավելվածի 116-րդ կետով սահմանված դեպքերում) Հաշվի առնելով, որ կառուցվող օբյեկտի շինարարությունը հնարավոր չէ առանց գլխավոր հատակագծի վրա _____ համարների տակ նշված շենքի (շենքերի) և կամ շինության (շինությունների) քանդման՝

(նշվում են ամբողջությամբ կամ մասամբ քանդման ենթակա օբյեկտները, դրանց հիմնական ցուցանիշները, ընդհանուր մակերեսը, հարկայնությունը, շինանյութերը և այլն)

սեփականատիրոջը (օգտագործողին, պետական գրանցման վկայական՝ _____) տրված սույն թույլտվությունը նաև քանդման թույլտվություն է: Օբյեկտի քանդման աշխատանքներն իրականացնել նախագծային փաստաթղթերով ամրագրված հաջորդականությամբ:

7. Այլ պայմաններ **սույն թույլտվությունը տրված է ի լրումն Աբովյան համայնքի ղեկավարի կողմից տրված 16.09.2022թ. N 351 շինարարության թույլտվության, փոփոխվել է Աբովյան համայնքի ղեկավարի 12.10.2026թ. N 4898 որոշմամբ**:

(նշվում են իրավական ակտերով և (կամ) պայմանագրով նախատեսված այլ պայմանները)

8. Կառուցապատողը շինարարական (քանդման, ապամոնտաժման) աշխատանքներն սկսելուց առնվազն 3 օր առաջ, համաձայն N 5 հավելվածի N 2-5 ձևի, տեղեկացնում է իրավասու մարմնին:

9. Թույլտվության հիման վրա ցանկացած շինարարական և գուգահեռ աշխատանք կարող է իրականացվել բացառապես Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, նախագծային փաստաթղթերին և նորմատիվ-տեխնիկական պահանջներին համապատասխան:

(Սույն շինարարության թույլտվությունը տրվում է ի լրումն և ի փոփոխություն 16-06-2026թ., ՇԹ/752/30159-26 շինարարության թույլտվության)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Աբովյան համայնքի ղեկավար՝ **ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ**

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Կ. Տ.
(ձևը փոփ. 16.06.16 N 630-Ն)

13.10.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հոկտեմբերի 2026 թվականի N 4897

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 3338 ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ N 407 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, Աբովյան համայնքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 20-ի N 176-Ն որոշման, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 2024 թվականի դեկտեմբերի 28-ի N 28122024-07-0006 վկայականը, «Ա-ԷՆ-ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2026 թվականի հոկտեմբերի 05-ին լրամշակված և փոփոխված աշխատանքային նախագիծը, հաշվի առնելով Սիրանուշ Միքայելյանի լիազորած անձ Կարեն Պողոսյանի դիմումը (մուտք՝ 2026 թվականի հոկտեմբերի 07-ի N Ք-7857).

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Տալ համաձայնություն Աբովյան համայնքի ղեկավարի 2022 թվականի հոկտեմբերի 21-ի N 3338 որոշմամբ հաստատված N 407 շինարարության թույլտվությամբ սահմանված նախագծային փաստաթղթերում կատարված փոփոխությանը և Սիրանուշ Միքայելյանին տալ շինարարության թույլտվություն:
2. Սիրանուշ Միքայելյանը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105201454 հաշվեհամարին մուծել 15 000 (տասնհինգ հազար) դրամ տեղական տուրք՝ շինարարության թույլտվության համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 12
ք. Աբովյան

Փաստաթղթի կազմակերպության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի տրամադրումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am կայքում՝ ներքևի հսկիչ համարով PM6B-A614-E9D7-31D9.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

N ՇԹ/763/38997-26 13-10-2026

Տրված է կառուցապատող **ՍԻՐԱՆՈՒՇ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ / 6403840703 / ԿՈՏԱՅՔ, ԱԲՈՎՅԱՆ, ՍԱՐԱԼԱՆՋ, 12Շ, 41ԲՆ**, հողամասի գտնվելու վայրը՝ **Մարզ Կոտայք, համայնք Աբովյան գյուղ Գետարգել 8-րդ փողոց 17**

(իրավաբանական անձի անվանումը, ալետական գրանցման վկայականի համարը, Ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հասցեն, հողամասի գտնվելու վայրը)

Օբյեկտի անվանումը՝ **Կառուցում, Բնակելի տուն և պարիսպ, Բնակելի տուն և պարիսպ, Ռիսկայնության աստիճանը՝ II**

(օբյեկտի անվանումը, ռիսկայնության աստիճանը (նշատեգրիան), հասկրոտ բնութագիրը, հիմնական ցուցանիշները)

1. Օբյեկտի նախագծային փաստաթղթերը՝

1) մշակվել են **«Աշխատանքային նախագիծ»**,

Ճարտարապետական մաս՝ «Ա-ԷՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ(ՍՈՒՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ) կողմից

(նախագծային փաստաթղթերի փուլը, նախագծային աշխատանքների կապալառուի անվանումը, լիցենզիայի համարը)

2) ստացել է (են) փորձագիտական դրական եզրակացությունը (եզրակացությունները)

(նշել փորձաքննության տեսակը)

կամ

նախագիծը թողարկող պատասխանատու կապալառուի երաշխավորագիրը՝ N՞-03/10-26 «Ա-ԷՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ընկերության կողմից

(նշել նախագիծը թողարկող պատասխանատու կապալառուի երաշխավորության պայմանագրի համարը)

3) սահմանված կարգով համաձայնեցվել են իրավասու մարմնի, օրենքով սահմանված այլ շահագրգիռ մարմինների հետ՝

Նախագծման թույլտվություն (Ճարտարապետահատակագծային առաջադրանք)՝ 19.09.2022թ 484

(նշել մարմինների անվանումները և համաձայնեցման ժամկետները)

2. Շինարարական աշխատանքներն իրականացնել **մինչև 22.10.2026թ.** ընթացքում

(նշել շինարարության նորմատիվային տևողությունը)

Ներառյալ ավարտական ակտի տրամադրման համար ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքի համար նախատեսվող ժամկետը:

2.1. Ապահովել օբյեկտի շահագործման թույլտվության ստացումը՝

☐ ավարտական ակտի տրամադրումից

☑ ավարտական ակտի տրամադրման օրը:

Ներառյալ ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքի համար նախատեսվող ժամկետը:

3. Շինարարության վարման մատյանը բաղկացած է էջից, կարված և դրոշմակնքված է կողմից:

(իրավասու մարմնի անվանումը)

4. Նախագծային փաստաթղթերը փոփոխվել են (լրացվում է N 1 հավելվածի 108-րդ կետով նախատեսված դեպքերում) **«Ա-ԷՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ** ընկերության(ընկերությունների) կողմից

(նախագծային աշխատանքների կապալառուի անվանումը, լիցենզիայի համարը)

և սահմանված կարգով համաձայնեցվել իրավասու մարմնի և այլ շահագրգիռ մարմինների հետ:

(նշել օրենքով սահմանված համաձայնեցնող մարմինների անվանումները)

5. Հատուկ պայմաններ՝

1) կառուցապատողը, նախքան շինարարությունն սկսելը, ինչպես նաև դրա ընթացքում, պարտավոր է

հասցվելիք վնասների փոխհատուցման համար համաձայնության գալ կառուցապատման հետևանքով վնասներ կրող սուբյեկտների հետ.

2) շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետներում կառուցապատումը չավարտելու դեպքում գործում են N 1 հավելվածի 123-126-րդ կետերով սահմանված պահանջները.

3) (լրացվում է N 1 հավելվածի 84-րդ կետով սահմանված դեպքերում) սույն թույլտվությունը տրվել է սահմանված կարգով հաստատված «Նախագիծ» փուլի հիման վրա, որին հաջորդող «Աշխատանքային փաստաթղթեր» փուլը պետք է ապահովի հաստատված փուլով ընդունված լուծումները և աշխատանքների իրականացման հաջորդականությունը

(նշվում են նախնական/հիմնային, շինմոնտաժային աշխատանքները և այլ աշխատանքներ)

6. (լրացվում է N 1 հավելվածի 116-րդ կետով սահմանված դեպքերում) Հաշվի առնելով, որ կառուցվող օբյեկտի շինարարությունը հնարավոր չէ առանց գլխավոր հատակագծի վրա _____ համարների տակ նշված շենքի (շենքերի) և կամ շինության (շինությունների) քանդման՝

(նշվում են ամբողջությամբ կամ մասամբ քանդման ենթակա օբյեկտները, դրանց հիմնական ցուցանիշները, ընդհանուր մակերեսը, հարկայնությունը, շինանյութերը և այլն)

սեփականատիրոջը (օգտագործողին, պետական գրանցման վկայական՝ _____) տրված սույն թույլտվությունը նաև քանդման թույլտվություն է: Օբյեկտի քանդման աշխատանքներն իրականացնել նախագծային փաստաթղթերով ամրագրված հաջորդականությամբ:

7. Այլ պայմաններ **սույն թույլտվությունը տրված է ի լրումն Աբովյան համայնքի ղեկավարի կողմից տրված 21.10.2022թ. N 407 շինարարության թույլտվության, փոփոխվել է Աբովյան համայնքի ղեկավարի 12.10.2026թ. N 4897 որոշմամբ**:

(նշվում են իրավական ակտերով և (կամ) պայմանագրով նախատեսված այլ պայմանները)

8. Կառուցապատողը շինարարական (քանդման, ապամոնտաժման) աշխատանքներն սկսելուց առնվազն 3 օր առաջ, համաձայն N 5 հավելվածի N 2-5 ձևի, տեղեկացնում է իրավասու մարմնին:

9. Թույլտվության հիման վրա ցանկացած շինարարական և զուգահեռ աշխատանք կարող է իրականացվել բացառապես Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, նախագծային փաստաթղթերին և նորմատիվ-տեխնիկական պահանջներին համապատասխան:

(Սույն շինարարության թույլտվությունը տրվում է ի լրումն և ի փոփոխություն 22-04-2026թ., ՇԹ/763/26381-26 շինարարության թույլտվության)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Աբովյան համայնքի ղեկավար՝ **ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ**

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Կ. Տ.
(ձևը փոփ. 16.06.16 N 630-Ն)

13.10.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հոկտեմբերի 2026 թվականի N 4896

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 25-Ի N 1445 ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ N 152 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, Աբովյան համայնքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 20-ի N 176-Ն որոշման, հիմք ընդունելով «ԿԱՐՊԵՏ ԴԻԶԱՅՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2026 թվականի սեպտեմբերի 02-ին լրամշակված և փոփոխված աշխատանքային նախագիծը, հաշվի առնելով Նորայր Հակոբյանի լիազորած անձ Վարդանուշ Ղուկասյանի դիմումը (մուտք՝ 2026 թվականի հոկտեմբերի 08-ի N Ք-7917).

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Տալ համաձայնություն Աբովյան համայնքի ղեկավարի 2024 թվականի մարտի 25-ի N 1445 որոշմամբ հաստատված N 152 շինարարության թույլտվությամբ սահմանված նախագծային փաստաթղթերում կատարված փոփոխությանը և Նորայր Հակոբյանին տալ շինարարության թույլտվություն:
2. Նորայր Հակոբյանը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105201454 հաշվեհամարին մուծել 15 000 (տասնհինգ հազար) դրամ տեղական տուրք շինարարության թույլտվության համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 12
ք. Աբովյան

Փաստաթղթի
կազմակերպության ստորագրումն
ու էլեկտրոնային բնօրինակի
նույնականացումը հնարավոր է
ստուգել https://verify.e-
gov.am կայքում հետևյալ հսկիչ
համարով PM4D-EB6B-CE42-
B51C

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

N ՇԹ/752/38994-26 13-10-2026

Տրված է կառուցապատող **ՆՈՐԱՅՐ ՀԱԿՈԲՅԱՆ / 2912810345 / ԵՐԵՎԱՆ, ԱՎԱՆ, ՉԱՐԵՆՑ ԹՂՄ., 10/3Տ**
հողամասի գտնվելու վայրը՝ **Մարզ Կոտայք, համայնք Աբովյան գյուղ Առինջ Պ. Դուրյան թաղամասի 10-րդ փողոց 2/1 հողամաս**

(իրավաբանական անձի անվանումը, պետական գրանցման վկայականի համարը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հասցեն, հողամասի գտնվելու վայրը)

